Արամ ԻՍԱԲԵԿՅԱՆ.

# «Չափանիշներն ինչ-որ չափով փոխվել են»

**Չգիտեմ՝ ուրիշ տեղ՝ ինչպես, բայց Հայաստանում հայ ստեղծագործողը միշտ էլ չարքաշ է եղել ու առավելապես՝ գիտակցված, քան՝ պարտադրված: Հայ արվեստագետ-մշակը միշտ էլ իր գրչի-վրձնի նյութը ձգել է՝ մինչեւ իր երկրի աչքը լույս գա, մինչեւ իր ժողովրդի օրը բարի բացվի, մինչեւ ինքը իր վերջին բջիջը մատաղ անի հանուն... թվարկածի ու գալիք սերունդների:**

**Այդպես էլ եղել է: Բայց այսօր պետականություն ենք, անկախ պետություն ունենք, մեր զինանշանը-օրհներգը-դրոշը ունենք (լավ թե վատ՝ դա ուրիշ հարց է), մեր անձնագիրն ունենք: Ու այս ամենի համատեքստում ենթադրվում է որոշակի քաղաքականություն երկրի, ժողովրդի առաջընթացի համար, որը նախ եւ առաջ պայմանավորվում է մշակութային ճիշտ-ճշգրիտ քաղաքականությամբ: Ինչո՞ւ ապավինել ազգի իներցիային ու, ի վերջո, մի օր կանգնել թելը բարակել-կտրվելու վախի առջեւ: Ինչո՞ւ, իսկապես, տեր չկանգնել մշակութային ժառանգության պահպանությանն ու այդ ժառանգությունը հարստացնելուն կոչված ժամանակակից արվեստագետին:**

**Հարցը մերկապարանոց կհնչեր, եթե չհիմնավորեինք փաստարկներով, որոնք փնտրելու համար այցելեցինք երկրի արվեստի դպրոցներից մեկը՝ Երեւանի գեղարվեստի ակադեմիա: Ռեկտոր, պրոֆեսոր Արամ Իսաբեկյանը, ինքն էլ նկարիչ է, ժամանակին ավարտել է նույն հաստատությունը եւ մտահոգված է վաղվա արվեստագետին բախվելիք խնդիրներով:**

– Ակադեմիայի այսօրվա վիճակը անհամեմատելի է սովետական շրջանի առաջին տարիների հետ, քանի որ նախկին՝ չորսհարկանի կիսափլված շենքը եւ շատ վատ նյութատեխնիկական բազան հաստատությունը փակվելու վտանգի առջեւ էին կանգնեցրել:

Այսօր արդեն ունենք երկու մասնաշենք եւ մասնաճյուղեր՝ Գյումրի, Դիլիջան քաղաքներում: Բազմաթիվ աշխատասենյակներ ենք բացել, նոր բաժիններ ունենք, ուսանողների քանակը երկու հարյուրից հասել է հինգ հարյուրի: Շենքերը, թեկուզ՝ մեծ դժվարությամբ, վերանորոգում ենք: Բայց պետք է ասել, որ այս ամեն ինչի մեջ պետությունը այնքանով մասնակից չէ, որքանով որ կցանկանայի: Իկարկե, փաստաթղթային ընդառաջումներ լինում են: Սակայն ֆինանսական ոչ մի աջակցություն չենք ստանում, բացի աշխատավարձից, որն էլ գիտեք՝ մարդիկ ինչպես են անվանում: Եվ, իհարկե, կրթաթոշակներ՝ պետպատվերի համակարգում սովորողների համար: Մնացածը՝ ամբողջությամբ, մեր հոգսն է:

Տպավորություն կա, որ արվեստի բուհերի վիճակն ընդհանրապես վատ է: Մեր համակարգի ուսանողների մեծ մասը բարեկեցիկ ընտանիքներից չէ, եւ նրանց այստեղ է բերում, որպես կանոն, սերը արվեստի նկատմամբ: Այդ սերն իսկապես այնքան մեծ է, որ նրանց մղում է նույնիսկ վճարելով սովորելուն: Այստեղ հարց կառաջանա, թե, եթե այդքան շնորհքով են, թող պետպատվերով անցնեն: Բայց պետպատվերի տեղերը խիստ սահմանափակ են, մի քանի տարի արդեն դիմում ենք՝ ավելացնելու խնդրանքով, դեռեւս ոչ մի արձագանք: Ընդհանրապես, ընդունված է, որ արվեստի բուհը ամբողջությամբ պետական հոգածության ներքո պիտի լինի: Աշխարհի բոլոր նորմալ երկրներում այդպես է: Մեզ մոտ այլ է:

**– Ունե՞ք խնդիր, որը խոչընդոտում է ուսումնական բնականոն եւ առավել արդյունավետ ընթացքը:**

– Մեր այսօրվա գերագույն խնդիրը ջեռուցման բացակայությունն է: Ամբողջ համակարգը ժամանակին քանդված-քայքայված վիճակում է, եւ այն վերականգնելը ֆինանսական մեծ միջոցների հետ է կապված: Սա հարց է, որը մենք չենք կարող լուծել առանց հովանավորի: Շենքը չտաքացվելու պատճառով ձմռանը երկարաժամկետ արձակուրդի ենք ուղարկում ուսանողներին ու միայն մարտին վերսկսում դասերը: Թեեւ եղանակի քմահաճույքները այնպիսի անակնկալ են երբեմն մատուցում, որ գարնան ուշանալու հետ այդ արձակուրդի ժամանակը ավելի երկարում է: Իհարկե, ուսումնական ծրագրերը մենք ապահովում ենք ամառվա հաշվին, բայց դա էլ ուսանողներին, դասախոսներին հանգստի հնարավորություն չի տալիս: Սեպտեմբերի 1-ից էլ սկսում ենք ուսումնական տարին՝ փոխհատուցելու համար ձմռանը կորցնելիք ժամանակը: Թեեւ նախկինում դասերն սկսվում էին հոկտեմբերի 1-ից, որը հատուկ հաշվարկված էր արվեստագետ-դասախոսներին ստեղծագործական արձակուրդի հնարավորություն տրամադրելու համար:

Հայտնի բան է, որ աշխատելու-սովորելու ամենալավ ժամանակը ձմեռն է, իսկ ամառը միշտ մղում է հանգստի: Եվ, փաստորեն, ջեռուցման բացակայությունը ծանրաբեռնում է թե՛ ուսանողներին, թե՛ դասախոսական կազմին:

**– Գուցե համեմատե՞ք այսօրվա ուսանողների իմացական-շնորհային մակարդակը Ձեր ժամանակների հետ:**

– Իհարկե, միշտ էլ կան տաղանդավոր երեխաներ: Օրինակ, Գյումրիի երեխաներն ինձ շատ են ուրախացնում: Ընդունվելու ժամանակ եթե նրանք թույլ են, ապա մեկ տարի հետո այնպե՜ս են բացվում... Ուրեմն՝ շնորհքով են, ինչ-որ տաղանդ ունեն, ընկալունակ են: Այսօր ուսանողները ավելի շատ ինֆորմացիայի պակաս ունեն: Քիչ կարդալը, ռոմանտիկայի պակասը, ավելի շատ նյութականի ետեւից ընկնելը խանգարում են, որ եղած շնորհքը առավելագույնս զարգանա: Հետո՝ չափանիշներն են ինչ-որ չափով փոխվել: Շատերը տեսնում են, որ, եթե տվյալ նկարչի գործերն այսօր վաճառվում են, այդ ոճին պիտի հետեւել՝ առանց գիտակցելու, որ դա նորաձեւության նման անցողիկ է: Ես նշեցի, որ ուսանողների թիվը նախկինի նկատմամբ ավելացել է, բայց ցավում եմ, որ դա եղել է նոր բացված՝ «նորաձեւ» (հագուստի մոդելավորում, համակարգչային դիզայն եւ այլն) եւ ոչ թե հիմնական (գեղանկարչություն, քանդակ, գրաֆիկա) բաժինների հաշվին: Իսկապես, շատ եմ ցավում հատկապես քանդակի համար: Շատ քիչ են դիմորդները: Ընտրու-

թյան հնարավորություն էլ չենք ունենում եւ ստիպված ընդունում ենք բոլոր դիմողներին՝ հույս ունենալով, թե ժամանակի մեջ կբացվեն:



**– Ուսանողը ավարտեց՝ ո՞ւր է գնում:**

– Նախկինում, հայտնի է, պետությունն ինչ-որ չափով տեր էր կանգնում իր արվեստագետին: Նկարիչների եւ քանդակագործների դեպքում նրանք համարվում էին ազատ ստեղծագործողներ, աշխատանքի ընդունվելու պահանջներ չկային նրանց նկատմամբ: Սակայն տարեկան մի քանի ծրագրված ցուցահանդեսներ կային, որոնց ժամանակ պետությունը պարտադիր գնումներ էր կատարում: Պատվերներ կային զանազան, որոշակի զբաղվածություն կար, վարձատրություն կար, եւ գրեթե բոլորը իրենց ապրուստը կարողանում էին ապահովել: Հիմա՝ չկա: Ես ընդունվողին էլ, ավարտողին էլ ասում եմ. մի ասպարեզ եք մտնում, որի նկատմամբ ձեր համոզվածությունն ու որոշումը պիտի արդար ու սրտով լինի, եւ, եթե կարծում եք, որ լավ արվեստագետ կարող եք դառնալ, նկատի ունեցեք, որ Հայաստանում մշակույթը դժվարանցելի ոլորտ է, դրանով ընտանիք պահելն այնքան էլ դյուրին չի լինելու:

**– Այսինքն՝ չկա՞ այն շուկան, որտեղ նկարիչ-քանդակագործը գնահատվելու հնարավորություն ունենա:**

– Ոչ: Ցավոք, այսօր, շուկա ասելով՝ հասկանում են վերնիսաժը: Դա շուկա չէ: Կներեք՝ բազար է: Գնորդը չի հասկանում՝ ո՛ր կտավն իրենից ինչ է ներկայացնում: Այն շուկան, այն հարաբերությունները, որ պիտի իսկապես ձեւավորվեին, չկան:

**– Իսկ ցուցահանդեսների ժամանակ, որտեղ իսկապես շատ արժեքավոր գործեր են ներկայացվում, գնորդներ չե՞ն հայտնվում:**

– Լավ հարց է, եւ ցավոտ հարց է: Մի օրինակ բերեմ: Նկարիչների միությունը քրիստոնեության՝ պետական կրոն հռչակելու 1700-ամյակին նվիրված ցուցահանդես կազմակերպեց: Վեհափառը հովանավորեց, մրցանակներ շնորհվեցին: Երեք ամիս ցուցահանդեսը մնաց, որպեսզի դրանով ամառվա ամիսներին ապահովվի հայ ու զբոսաշրջիկ-օտարների հոսքը ցուցահանդես, եւ գուցե թե նաեւ վաճառք տեղի ունենա: Ընդ որում, ասեմ, որ բավականին լավ գործեր կային՝ գեղանկարչական, գրաֆիկական, քանդակի, գորգարվեստի եւ այլն: Եվ պատկերացնո՞ւմ եք, երեք ամսվա մեջ մեկ նկար անգամ չվաճառվեց: Ձեր հարցի ամենալավ պատասխանը դա է:

**– Դառնանք Ձեզ՝ որպես արվեստագետի, եւ Ձեր առաջիկա ծրագրերին:**

– Այս տարի հիսունս է լրանում, եւ թեեւ ես մտադիր չէի, բայց ընկերներս պահանջում են, որ այն անպայման նշեմ: Իսկ նկարիչը ինչպե՞ս պիտի նշի ծննդյան հոբելյանը, եթե ոչ՝ ցուցահանդեսով: Դժվարություն կա, իհարկե, քանի որ երկու տարի առաջ մեծ անհատական ցուցահանդես եմ ունեցել Ազգային պատկերասրահում եւ չեմ ցանկանում նույն նկարները ցուցադրել: Որոշել էի դիմանկարների ցուցադրություն անել այս անգամ, բայց ժամանակի խնդիր ունեմ: Պետք է հասցնել: Հարցրեցիք, թե չի՞ խանգարում ռեկտորի աշխատանքը նկարչի ստեղծագործությանը. իհարկե, խանգարում է: Հենց այդ պատճառով էլ չեմ հասցնում: Ցուցահանդեսը նախատեսել եմ սեպտեմբերին: Տեսնենք, ժամանակը ցույց կտա: Միաժամանակ, երազում եմ կրկին գնալ Ֆրանսիա, քանի որ մի քանի պատկերասրահների հետ վաղուց պայմանավորվածություններ ունեմ:

*Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*